ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/28

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/54-4» և «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/55» ծածկագրերով գնանշման հարցում, տնտեսական ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/1497-2020 գրությամբ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.01.2020թ. թիվ 01/61-559 գրության հիման վրա, 23.01.2020թ.-ին «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ՆԳ-2020/33 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ՍՑ-ՆԳ-2020/33 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/28 համարի ծածկագիրը և 18.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 18.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.02.2020թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 17.01.2020թ. թիվ 01/61-559 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևայլը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ Ընկերության) միջև 10.06.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/54-4» և 19.06.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/55» ծածկագրով գնման պայմանագրերի (այսուհետ Պայմանագրեր) 1.1 կետերի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Վաճառողը ստանձնում է տնտեսական ապրանքների մատակարարման պարտավորությունը

(այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/55», «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/54-4» ծածկագրով գնման պայմանագրերի N 1 հավելվածների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցներով սահմանված վերջնաժամկետները 25.12.2019 թվականն է և Ընկերությունը չի կատարել պայմանագրերով սպանձնած պարտավորությունները.

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/55» ծածկագրով գնման պայմանագրի մասով չի իրականացրել 80532 ՀՀ դրամի տնտեսական ապրանքների մատակարարումը, «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/54-4» ծածկագրով գնման պայմանագրի մասով չի իրականացրել 15832 ՀՀ դրամի չափով տնտեսական ապրանքների մատակարարումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր. մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրերի 2.1.7 կետերի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրերով սահմանված պարտավորությունները Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը

նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված ապրանքների գնման պայմանագրերից՝ համապատասխանաբար համարելով դրանք մասնակի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում եմ «ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը: »:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը գրությամբ դիմել է «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/1497-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/28 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 10.06.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/54-4» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր թիվ 1):

Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 19.06.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/55» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր թիվ 2):

Կնքված Պայմանագրերի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն: Սահմանվել է մատակարարման ենթակա ապրանքների վերջնաժամկետը՝ 25.12.2019թ.:

www.gnumner.am համացանցային կայքում 20.01.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 10.06.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/54-4» և 19.06.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/55» ծածկագրերով գնման պայմանագրերը Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանի լուծվել են, հիմք ընդունելով Պայմանագրերի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/1497-2020 գրությամբ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 10.06.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/54-4» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 19.06.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/55» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

Կնքված Պայմանագրերի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն: Սահմանվել է մատակարարման ենթակա ապրանքների վերջնաժամկետը՝ 25.12.2019թ.:

www.gnumner.am համացանցային կայքում 20.01.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 10.06.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/54-4» և 19.06.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/55» ծածկագրերով գնման պայմանագրերը Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանի լուծվել են, հիմք ընդունելով Պայմանագրերի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 10.06.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/54-4» և 19.06.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/55» ծածկագրերով գնման պայմանագրերով սահմանված ժամկետում Պայմանագրերի Հավելված 1-ով սահմանված ապրանքները Մասնակցի կողմից չեն մատակարարվել, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 17.01.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 20.01.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/1497-2020 գրությամբ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/28 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**